## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ
## ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնք
ՀՀ Լոռու մարզ , ք. Թումանյան, Կենտրոնական փ., շ.1, Հեռ.
(098)048046, tumanyan.lori@mta.gov.am

**ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ**
**ՄԱՐԶՊԵՏ**
**ՊԱՐՈՆ ԱՆԴՐԵՅ ՂՈՒԿԱՍՅԱՆԻՆ**

N 354
*25 հունիս 2019թ.*

Հարգարժա՛ն պարոն Ղուկասյան

Ի լրումն մեր 17.06.2019թ.թիվ 344 գր.

Թումանյան համայնքի ավագանու 2019թ. հունիսի 11-ի թիվ 20-Ա - 29-Ա որոշումները:

Առդիր՝ 1 ֆայլ:

Հարգանքով՝

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԼԵՎՈՆ ՋԱՎԱՐՅԱՆ**

*Կատ. Աշխատակազմի քարտուղար՝ Ռ. Շահվերդյան*
*098 048 046*

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Թումանյան, (098)048046, tumanyan.lori@mta.gov.am

### ՈՐՈՇՈՒՄ

11 ՀՈՒՆԻՍԻ 2019թվականի N 20-Ա .

### ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 11-Ի ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ կետով՝
Թումանյան համայնքի ավագանին որոշում է.
Հաստատել Թումանյան համայնքի ավագանու 2019 թվականի հունիսի 11-ի նիստի օրակարգը.

1.ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2019Թ.ՀՈՒՆԻՍԻ 11-Ի ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ
2. ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ
3. ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ,,ԼՈՐՈՒՏ ԳՅՈՒՂԻ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ,, ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԵՎ ,,ՔԱՐԻՆՋ ԳՅՈՒՂԻ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ,, ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ
4. ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՄԱՔՐՄԱՆ, ՆԵՐՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՓՈՂՈՑՆԵՐԻ ԼՈՒՍԱՎՈՐՈՒԹՅԱՆ, ՆԵՐՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԻ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՈԼՈՐՏՆԵՐՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ
5. ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ
6. ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԱՅԼ ՀՈՂԵՐԻ ՀՈՂԱՏԵՍՔԸ ԱՃՈՒՐԴ-ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ
7. ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՍՈՒԲՎԵՆՑԻԱՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ
8. ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՀՈՂԱՅԻՆ ՀԱՇՎԵԿՇԻՌԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ
9.ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻՍՈՑԻ ԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ
10.ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԱՂԱԺԱՄԿԵՏ ԴԱԴԱՐԵՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Կողմ -5 Դեմ -1 Ձեռնպահ -0

ԳԱԼՍՏՅԱՆ ԳՈՌ

ՄԽԻԹԱՐՅԱՆ ՏԻԳՐԱՆ

ԽԵՉՈՅԱՆ ՄԵՐՈՒԺԱՆ

ՇԱՀՎԵՐԴՅԱՆ ՍԵՅՐԱՆ

ՍԱՐԳՍՅԱՆ ՀՐԱՆՏ

ՎԻՐԱԲՅԱՆ ԳԱՅԱՆԵ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԼԵՎՈՆ ՋԱՎԱՐՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Թումանյան, (098)048046, tumanyan.lori@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

11 ՀՈՒՆԻՍԻ 2019թվականի N 21-Ա

## ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով և <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի 6-րդ կետով,33,34,37-րդ հոդվածներով՝
Թումանյան համայնքի ավագանին որոշում է.

1.Թումանյան համայնքի 2019 թվականի տարեկան աշխատանքային պլանի. ՏԱՊ-ի ծրագրերը, որոնք ապահովված են համապատասխան ֆինանսական միջոցներով.Աղյուսակ 3-ի,Քաղաքաշինություն և կոմունալ տնտեսություն. Ոլորտ 4-ի 1-ին կետի՝ Թումանյան քաղաքի հրապարակի բարեկարգում և ջրավազանի վերանորոգում, Հ.Թումանյանի արձանի շրջակայքի բարեկարգում ծրագրի արժեքի 2500,0 ՀՀ դրամը դարձնել 3800,0 ՀՀ դրամ:
2.Ուժը կորցրած ճանաչել Թումանյան համայնքի ավագանու 2019 թվականի փետրվարի 15-ի թիվ 3-Ա որոշման՝ՏԱՊ-ի ծրագրերը, որոնք ապահովված են համապատասխան ֆինանսական միջոցներով.Աղյուսակ 3-ի,Քաղաքաշինություն և կոմունալ տնտեսություն. Ոլորտ 4-ի 1-ին կետի՝ Թումանյան քաղաքի հրապարակի բարեկարգում և ջրավազանի վերանորոգում, Հ.Թումանյանի արձանի շրջակայքի բարեկարգում ծրագրի արժեքի վերաբերյալ սահմանված՝2500,0 ՀՀ դրամի չափը:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԳԱԼՍՏՅԱՆ ԳՈՌ

ԽԵՉՈՅԱՆ ՄԵՐՈՒԺԱՆ

ՄԽԻԹԱՐՅԱՆ ՏԻԳՐԱՆ

ՇԱՀՎԵՐԴՅԱՆ ՍԵՅՐԱՆ

ՍԱՐԳՍՅԱՆ ՀՐԱՆՏ

ՎԻՐԱԲՅԱՆ ԳԱՅԱՆԵ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԼԵՎՈՆ ՋԱՎԱՐՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Թումանյան, (098)048046, tumanyan.lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

11 ՀՈՒՆԻՍԻ 2019թվականի N 22-Ա

## ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ,,ԼՈՐՈՒՏ ԳՅՈՒՂԻ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ,, ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԵՎ ,,ՔԱՐԻՆՋ ԳՅՈՒՂԻ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ,, ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ,ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 28-րդ կետով,<<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի 6-րդ կետով,33,34,37-րդ հոդվածներով և հիմք ընդունելով Լոռու մարզպետ Ա.Ղուկասյանի 02.05.2019թ. թիվ 01/106.3.1/03014-2019 գրությունը՝
Թումանյան համայնքի ավագանին որոշում է.

1.Հաստատել Թումանյան համայնքի<<Լորուտ գյուղի նախադպրոցական ուսումնական հաստատություն>> համայնքային ոչ առևտրային կազմակերպության և <<Քարինջ գյուղի նախադպրոցական ուսումնական հաստատություն>> համայնքային ոչ առևտրային կազմակերպության աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույք աչափերը՝ համաձայն 1 և 2 հավելվածների:
2.Ուժը կորցրած ճանաչել՝ Թումանյան համայնքի ավագանու 2018 թվականի դեկտեմբերի 21-ի <<Թումանյանի համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին թիվ 59-Ա որոշման 2 և 3 հավելվածները:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԳԱԼՍՏՅԱՆ ԳՈՌ

ԽԵՉՈՅԱՆ ՄԵՐՈՒԺԱՆ

ՄԽԻԹԱՐՅԱՆ ՏԻԳՐԱՆ

ՇԱՀՎԵՐԴՅԱՆ ՍԵՅՐԱՆ

ՍԱՐԳՍՅԱՆ ՀՐԱՆՏ

ՎԻՐԱԲՅԱՆ ԳԱՅԱՆԵ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԼԵՎՈՆ ԶԱՎԱՐՅԱՆ

Հավելված 1

Թումանյան համայնքի ավագանու

2019թ. Հունիսի 11-ի թիվ 22- Ա որոշման

# ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ<<ԼՈՌՈՒՏ ԳՅՈՒՂԻ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ>> ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ,ՀԱՍՏԻՔԱՅՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

Աշխատակիցների թվաքանակը՝ 6:

| հ/հ | Հաստիքի անվանումը | Հաստիքային միավորը | Պաշտոնային դրույքաչափը /ՀՀ դրամ/ | Ընդամենը |
|---|---|---|---|---|
| 1 | Տնօրեն | 1 | 125000 | 125000 |
| 2 | Հաշվապահ | 0.5 | 82000 | 41000 |
| 3 | Դաստիարակ | 1.12 | 105000 | 117600 |
| 4 | Խոհարար | 1 | 82000 | 82000 |
| 5 | Դաստիարակի օգնական | 1 | 82000 | 82000 |
| 6 | Հավաքարար | 0,5 | 82000 | 41000 |
|  | Ընդամենը | 5,12 | 558000 | 488600 |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԼԵՎՈՆ ԶԱՎԱՐՅԱՆ

Հավելված 2

Թումանյան համայնքի ավագանու

2019թ. Հունիսի 11-ի թիվ 22- Ա որոշման

# ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ <<ՔԱՐԻՆՋ ԳՅՈՒՂԻ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ>> ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ,ՀԱՍՏԻՔԱՅԻՆ ՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

Աշխատակիցների թվաքանակը՝ 6:

| հ/հ | Հաստիքի անվանումը | Հաստիքային միավորը | Պաշտոնային դրույքաչափը /դրամ/ | Ընդամենը |
|---|---|---|---|---|
| 1 | Տնօրեն | 1 | 121000 | 121000 |
| 2 | Հաշվապահ | 0.5 | 82000 | 41000 |
| 3 | Դաստիարակ | 1.12 | 105000 | 117600 |
| 4 | Խոհարար | 1 | 82000 | 82000 |
| 5 | Դաստիարակի օգնական | 1 | 82000 | 82000 |
| 6 | Հավաքարար | 0,5 | 82000 | 41000 |
| | Ընդամենը | 5,12 | 554000 | 484600 |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԼԵՎՈՆ ԶԱՎԱՐՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Թումանյան, (098)048046, tumanyan.lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

11 ՀՈՒՆԻՍԻ 2019թվականի N 23-Ա

## ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՄԱՔՐՄԱՆ, ՆԵՐՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՓՈՂՈՑՆԵՐԻ ԼՈՒՍԱՎՈՐՈՒԹՅԱՆ, ՆԵՐՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԻ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՈԼՈՐՏՆԵՐՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով և հիմք ընդունելով <<Կոմպասս>> գիտահետազոտական, կրթական և խորհրդատվական կենտրոն, <<ՀԿ Կենտրոն>>, <<Տեղեկատվական համակարգերի զարգացման և վերապատրաստման կենտրոն>> հասարակական կազմակերպությունների կողմից 2018 թվականի օգոստոս-սեպտեմբեր ամիսներին Թումանան համայնքում աղբահանության և սանիտարական մաքրման, ներհամայնքային փողոցների լուսավորության, ներհամայնքային ճանապարհների սպասարկման ոլորտներում համատեղ իրականացված մոնիթորինգի արդյունքները և առաջարկությունները՝
Թումանյան համայնքի ավագանին որոշում է.

<<Կոմպասս>> գիտահետազոտական, կրթական և խորհրդատվական կենտրոն, <<ՀԿ Կենտրոն>>, <<Տեղեկատվական համակարգերի զարգացման և վերապատրաստման կենտրոն>> հասարակական կազմակերպությունների կողմից 2018 թվականի օգոստոս-սեպտեմբեր ամիսներին Թումանյան համայնքում աղբահանության և սանիտարական մաքրման, ներհամայնքային փողոցների լուսավորության, ներհամայնքային ճանապարհների սպասարկման ոլորտներում համատեղ իրականացված մոնիթորինգի արդյունքները և առաջարկությունները /կցվում է/ընդունել ի գիտություն:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԳԱԼՍՏՅԱՆ ԳՈՌ

ԽԵՉՈՅԱՆ ՄԵՐՈՒԺԱՆ

ՄԽԻԹԱՐՅԱՆ ՏԻԳՐԱՆ

ՇԱՀՎԵՐԴՅԱՆ ՍԵՅՐԱՆ

ՍԱՐԳՍՅԱՆ ՀՐԱՆՏ

ՎԻՐԱԲՅԱՆ ԳԱՅԱՆԵ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԼԵՎՈՆ ՉԱՄՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՄԱՔՐՄԱՆ, ՆԵՐՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԻ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ, ՆԵՐՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՓՈՂՈՑՆԵՐԻ ԼՈՒՍԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՆԵՐՈՒՄ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ՝ «ՄԱՍՆԱԿՑԱՅԻՆ ՄՈՆԻԹՈՐԻՆԳ՝ ՀԱՆՈՒՆ ԽԵԼԱՑԻ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՍՏԵՂԾՄԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ

Հիմք ընդունելով 2018 թվականի օգոստոս-սեպտեմբեր ամիսներին Թումանյան համայնքում իրականացված մոնիթորինգային աշխատանքների արդյունքները **Աղբահանության և սանիտարական մաքրման** ոլորտում՝ արձանագրվել են.

1. Թումանյան համայնքի բոլոր բնակավայրերում իրականացվում է կենտրոնացված աղբահանություն, Թումանյան բնակավայրում՝ շրջիկ աղբատար մեքենայի, իսկ խոշորացված համայնքի մաս կազմող մյուս բնակավայրերում՝ հիմնականում աղբարկղերի մեջ թափելու միջոցով: Մի շարք դեպքերում բնակիչների կողմից աղբահեռացումն իրականացվում է նաև աղբը ջրատար առվի կամ գետի մեջ նետելու կամ այրելու միջոցով:

**Առաջարկվում է** Թումանյան համայնքի անագանու որոշմամբ համայնքի բյուջեով միջոցներ նախատեսել նշյալ բնակավայրերում աղբահանության պատշաճ կազմակերպման համար: Սահմանել տուգանքներ՝ սույն դեպքերի արձանագրման դեպքում:

2. Խոշորացված համայնքի բնակավայրերում աղբամանների քանակի անհամաչափ բաշխում: Համեմատաբար մեծ բնակավայրերի բնակչությանը չի բավարարում աղբարկղերի քանակը և տարողունակությունը:

**Առաջարկվում է** աղբարկղերը բնակավայրերում բաշխել համաչափորեն՝ ըստ բնակչության խտության: Ավելացնել աղբարկղերի քանակը (այս առաջարկը արվել է նաև բնակիչների կողմից, հատկապես՝ Թումանյան և Լորուտ)

3. Համայնքում տեղակայված կենտրոնացված աղբավայրը պետք է համապատասխանի նորմատիվային պահանջներին, մասնավորապես՝ բնակելի տարածքներից հեռավորության պահպանում և ցանկապատում: Թումանյան համայնքի կենտրոնացված աղբավայրը մեկուսացված չէ շրջակա տարածքներից և չունի համապատասխան ցանկապատում:

**Առաջարկվում է** Թումանյան համայնքի ավագանու որոշմամբ 2020 թվականի համայնքի բյուջեով նախատեսել ֆինանսական միջոցներ՝ կենտրոնացված աղբավայրի ցանկապատման համար:

Ընդհանուր դիտարկումներ՝

1) Խոշորացված համայնքներում պետք է ապահովել այն նորմատիվային պահանջների կատարումը, որոնք չեն ենթադրում համայնքի կողմից մեծ ծախսերի ներդրում, ինչպես օրինակ՝ աղբի կոնտեյներների և աղբատար մեքենաների վրա ապահովել աղբահանություն իրականացնող կազմակերպության անվանումը և կոնտակտային տվյալները, աղբամանները չտեղակայել փողոցի երթևեկելի հատվածում, մայթերի կամ

սիզամարգերի վրա, աղբամանները տեղակայել բնակելի տներից նվազագույնը 15 մետր հեռավորության վրա, ապահովել աղբամանների՝ հողից մեկուսացումը երկաթյա թիթեղների կամ բետոնե շերտի միջոցով:

2) ՔՀԿ-ների և համայնքապետարանների համատեղ ջանքերով համայնքային ծառայողների համար անհրաժեշտ է ստեղծել նորմատիվային ուղեցույց, որը յուրաքանչյուր ոլորտի, այդ թվում աղբահանության և սանիտարական մաքրման ծառայության վերաբերյալ կներառի քայլերի և օրինակելի իրավիճակի նկարագիր, որին պետք է ձգտի յուրաքանչյուր համայնքային ծառայող ու բնակիչ:

3) Առավել մեծ ուշադրություն է պետք դարձնել կենտրոնացված աղբավայրերին՝ հատկապես այն վայրերում, որտեղ աղբավայրերը տեղակայված են բնապահպանական առումով զգայուն ընկալիչների հարակից տարածքում:

4) Աղբահանության սխեմա կազմելիս կամ վերանայելիս անհրաժեշտ է նախ և առաջ այդ մասին քննարկումներ ունենալ համայնքի բնակիչների հետ՝ պարզելու համար, թե վերջիններիս համար աղբահանության իրականացման որ սխեման է առավել հարմար՝ աղբամանների միջոցով, թե շրջիկ աղբատար մեքենաների:

5) Նոր աղբամաններ տեղադրելիս բնակիչների հետ քննարկվել վերջիններիս նախընտրությունները՝ մասնավորապես տեղադրել փակվող կափարիչներով աղբամաններ, թե՝ ոչ:

6) Աղբամանների շրջակայքում տիրող գարշահոտությունը վերացնելու նպատակով անհրաժեշտ է պարբերաբար իրականացնել դեռատիզացիայի աշխատանքներ և դրա համար յուրաքանչյուր տարի համայնքի բյուջեից ֆինանսական միջոցներ հատկացնել:

Հիմք ընդունելով 2018 թվականի օգոստոս-սեպտեմբեր ամիսներին Թումանյան համայնքում իրականացված մոնիթորինգային աշխատանքների արդյունքները **Ներհամայնքային փողոցների լուսավորության սպասարկման** ոլորտում՝ արձանագրվել են.

1. Թումանյան համայնքի կենտրոն Թումանյան բնակավայրի համեմատ, համայնքի մյուս բնակավայրերում խիստ վատ է իրավիճակը փողոցների լուսավորության ոլորտում: Ընդհանրապես լուսավորություն չկա Ահնիձոր և Շամուտ բնակավայրերում, իսկ երկրորդական փողոցների պարագայում՝ գրեթե՝ բոլոր բնակավայրերում

**Առաջարկվում է** Թումանյան համայնքի ավագանու որոշմամբ համայնքի բյուջեով լուսավորության ոլորտին հատկացվող միջոցները բաշխելիս առավելություն տալ համայնքի ծայրամասային բնակավայրերին:

2. Թումանյան համայնքում դիտարկված 101 լուսասյուներից 25-ը չեն ունեցել լամպեր:

**Առաջարկվում է** Թումանյան համայնքի ավագանու որոշմամբ համայնքի բյուջեով միջոցներ հատկացնել մինչ 2020 թվականիի ավարտը, առկա բոլոր լուսասյուները ապահովել լամպերով:

3. Ըստ նորմատիվային պահանջների՝ քաղաքային բնակավայրերում գլխավոր փողոցների լուսավորության ապահովման առավելագույն մեծությունը 20 lux է, իսկ գյուղական համայնքների երկրորդական փողոցների լուսավորության ապահովման նվազագույն մեծությունը 4 lux է: Թումանյան համայնքի

բնակավայրերում փողոցների լուսավորության ապահովման միջին մեծությունը մինչև 3,73 lux է եղել:

**Առաջարկվում է** Թումանյան համայնքի ավագանու որոշմամբ համայնքապետարանի կողմից նոր լամպեր տեղադրելուց հետո կատարել նորմատիվի համապատասխանելիության գնահատում:

Հիմք ընդունելով 2018 թվականի օգոստոս-սեպտեմբեր ամիսներին Թումանյան համայնքում իրականացված մոնիթորինգային աշխատանքների արդյունքները **ներհամայնքային ճանապարհների սպասարկման** ոլորտում՝ արձանագրվել են.

1) Թումանյան համայնքի 2014-2018 թվականների բյուջեներով համայնքում հիմնանորոգվող և վերանորոգվող փողոցների համար որակի որևէ փորձաքննություն չի իրականացվել՝ շինարարական աշխատանքների ավարտից հետո:

**Առաջարկվում է** Թումանյան համայնքում հիմնանորոգվող փողոցների համար- համայնքի բյուջեից ամեն տարի հատկացնել ֆինանսական միջոցներ՝ որակի մոնիթորինգի և մշտադիտարկման համար (օրինակ ասֆալտբետոնե շերտի լաբորատոր փորձաքննություն):

2) Թումանյան համայնքում դիտարկված 35 փողոցներից 34-ը չեն եղել գծանշված և կահավորված՝ համապատասխան երթևեկության նշաններով:

**Առաջարկվում է** Թումանյան համայնքի ավագանու որոշմամբ համայնքի բյուջեից միջոցներ հատկացնել հատկապես բանուկ փողոցների գծանշման և կահավորման համար:

3) Թումանյան համայնքում հիմնանորոգվող ճանապարհների համար համայնքապետարանի կողմից սահմանված երաշխիքային սպասարկման նվազագույն ժամանակահատված չի սահմանվում:

**Առաջարկվում է** Թումանյան համայնքի ավագանու որոշմամբ հիմնանորոգվող ճանապարհների նախագծերը կազմող ընկերությունների համար սահմանել կատարվող աշխատանքների 5 տարվա երաշխիքային սպասարկում:

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Թումանյան, (098)048046, tumanyan.lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

11 ՀՈՒՆԻՍԻ 2019թվականի N 24-Ա

## ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ Հողային օրենսգրքի 3-րդ, 52-րդ հոդվածներով, <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 21-րդ կետով, ՀՀ Քաղաքացիական օրենսգրքով, <<Քաղաքաշինության մասին>> ՀՀ օրենքով, ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի 01/06/2010թ. թիվ 186-Ն հրամանով, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 13/04/2006 թվականի թիվ 719-Ն որոշումը և որակավորված անձի կողմից տրված հողամասերի հատակագիծը՝
Թումանյան համայնքի ավագանին որոշում է.

1.Համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի հետ կապված անճշտությունների ուղղման համար, Թումանյան համայնքի Թումանյան քաղաքի վարչական սահմաններում գտնվող Թումանյան համայնք Թումանյան քաղաքի 13-րդ փողոց,թիվ 16 հասցեում, 06-004-0031-0009 կադաստրային ծածկագրի տակ գտնվող 0,0098 հա բնակավայրերի բնակելի կառուցապատման տնամերձ հողամասի նկատմամբ, քանի որ գոյություն չունեն որևէ իրավունք հաստատող փաստաթղթեր և այն ՀՀ կառավարության 13/04/2006 թվականի թիվ 719-Ն որոշմամբ փոխանցված չէ համայնքին,առաջնորդվելով ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի նախագահի 01/06/2010թ. թիվ 186-Ն հրամանի II գլխի 5-րդ կետով, որոշում եմ նշված հողամասի նկատմամբ ճանաչել Թումանյան համայնքի սեփականության իրավունքը:
1/Նշված հողամասը ենթակա է գրանցման Թումանյանի համայնքապետարանի անվամբ:
2/Թույլատրել համայնքի ղեկավարին դիմելու ՀՀ ԿԱ ԱԳԿՊԿ աշխատակազմի Լոռու մարզային ստարաբաժանում նշված հողամասի համար սեփականության վկայական ստանալու համար:
3/Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:
2.Համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի հետ կապված անճշտություննե րի ուղղման համար, Թումանյան համայնքի Թումանյան քաղաքի վարչական սահմաններում գտնվող Թումանյան համայնք Թումանյան քաղաքի 1-ին փողոց,1-ին նրբանցք, թիվ 22 հասցեում, 06-004-0016-0049 կադաստրային ծածկագրի տակ գտնվող 0,06693 հա բնակավայրերի բնակելի կառուցապատման տնամերձ հողամասի նկատմամբ, քանի որ գոյություն չունեն որևէ իրավունք հաստատող փաստաթղթեր և այն ՀՀ կառավարության 13/04/2 006 թվականիթիվ 719-Ն որոշմամբ փոխանցված չէ համայնքին, առաջնորդվելով ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի նախագահի 01/06/2010թ. թիվ 186-Ն հրամանի 2-րդ գլխի 5-րդ կետով, որոշում եմ նշված հողամասի նկատմամբ ճանաչել Թումանյան համայնքի սեփականության իրավունքը:
1/Նշված հողամասը ենթակա է գրանցման Թումանյանի համայնքապետարանի անվամբ:

2/Թույլատրել համայնքի ղեկավարին՝ դիմելու ՀՀ ԿԱԱԳԿՊԿ աշխատակազմի Լոռու մարզային ստորաբաժանում՝ նշված հողամասի համար սեփականության վկայական ստանալու համար:
3/Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԳԱԼՍՏՅԱՆ ԳՈՌ

ԽԵՉՈՅԱՆ ՄԵՐՈՒԺԱՆ

ՄԽԻԹԱՐՅԱՆ ՏԻԳՐԱՆ

ՇԱՀՎԵՐԴՅԱՆ ՍԵՅՐԱՆ

ՍԱՐԳՍՅԱՆ ՀՐԱՆՏ

ՎԻՐԱԲՅԱՆ ԳԱՅԱՆԵ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ [illegible] ՋԱՎԱՐՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Թումանյան, (098)048046, tumanyan.lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

11 ՀՈՒՆԻՍԻ 2019թվականի N 25-Ա

## ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԱՅԼ ՀՈՂԵՐԻ ՀՈՂԱՏԵՍՔԸ ԱՃՈՒՐԴ-ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով<<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 67-րդ հոդվածի պահանջներով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ Թումանյան համայնքի ավագանին որոշում է.

1.Տալ համաձայնություն համայնքային սեփականություն հանդիսացող Թումանյան համայնք, ք.Թումանյան,1-ին փողոց,թիվ 34 հասցեում գտնվող 06-004-0016-0043 ծածկագրի բնակավայրերի նշանակության 0,18516 հա մակերեսով այլ հողեր գործառնական նշանակության հողատեսքը աճուրդ- վաճառքով օտարելու համար:
2.Հողամասի մեկնարկային գինը սահմանել 177754 ՀՀ դրամ, քայլի չափը սահմանել 8888 ՀՀ դրամ, նախավճարի չափը սահմանել՝ 8888 ՀՀ դրամ:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԳԱԼՍՏՅԱՆ ԳՈՌ

ԽԵՉՈՅԱՆ ՄԵՐՈՒԺԱՆ

ՄԽԻԹԱՐՅԱՆ ՏԻԳՐԱՆ

ՇԱՀՎԵՐԴՅԱՆ ՍԵՅՐԱՆ

ՍԱՐԳՍՅԱՆ ՀՐԱՆՏ

ՎԻՐԱԲՅԱՆ ԳԱՅԱՆԵ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ...ՂԱՎԱՐՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Թումանյան, (098)048046, tumanyan.lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

.11 ՀՈՒՆԻՍԻ 2019թվականի N 26-Ա

## ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՍՈՒԲՎԵՆՑԻԱՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի 6-րդ ենթակետով,<<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի 6-րդ կետով,33,34,37-րդ հոդվածներով,հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2019թ. հունվարի 31-ի N 62-Ն որոշման <<Հայաստանի Հանրապետության պետական տարեկան բյուջեներով նախատեսված սուբվենցիաներից բացի Հայաստանի Հանրապետության համայնքների տնտեսական և սոցիալական ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված սուբվենցիայի հայտի մշակման, ներկայացման>> կարգի 31.01.2019թ. 62-Ն որոշման N 1 հավելվածը, 06.11.2006թ. N 170-Ն որոշման N 2 հավելվածը և <<Հիդրոգազշիննախագիծ>> ՍՊԸ-ի Աշխատանքային նախագիծ- նախահաշիվները՝ Թումանյան համայնքի ավագանին որոշում է.

1.Թումանյան համայնքում սուբվենցիոն ծրագրերն իրականացնելու համար համայնքի ֆոնդային բյուջեից հատկացնել 11407501 ՀՀ դրամ, որից.

1) Համայնքի Լորուտ բնակավայրի ջրամատակարարման ներքին ցանցի հիմնանորոգման համար հատկացնել 5360043 ՀՀ դրամ /սուբվենցիոն ծրագրի գումարը կազմում է 15314410 ՀՀ դրամ/,

2) Համայնքի բոլոր բնակավայրերի փողոցների լուսավորության կառուցման և ընդլայնման համար հատկացնել 6047458 ՀՀ դրամ /սուբվենցիոն ծրագրի գումարը կազմում է 15118647 ՀՀ դրամ/:

2.Ուժը կորցրած ճանաչել Թումանյան համայնքի ավագանու՝2019 թվականի ապրիլի 26-ի <<Թումանյան համայնքի բնակավայրերի տնտեսական և սոցիալակամ զարգացմանն ուղղված սուբվենցիաների տրամադրման մասին>> թիվ 19-Ա որոշումը:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԳԱԼՍՏՅԱՆ ԳՈՌ

ԽԵՉՈՅԱՆ ՄԵՐՈՒԺԱՆ

ՄԽԻԹԱՐՅԱՆ ՏԻԳՐԱՆ

ՇԱՀՎԵՐԴՅԱՆ ՍԵՅՐԱՆ

ՍԱՐԳՍՅԱՆ ՀՐԱՆՏ

ՎԻՐԱԲՅԱՆ ԳԱՅԱՆԵ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ... ԶԱՔԱՐՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Թումանյան, (098)048046, tumanyan.lori@mta.gov.am

### Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
11 ՀՈՒՆԻՍԻ 2019թվականի N 27-Ա

### ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՀՈՂԱՅԻՆ ՀԱՇՎԵԿՇԻՌԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարելով <<Հողային հաշվեկշիռը կազմելու կարգը հաստատելու մասին>> ՀՀ կառավարության 23.10.2000թ. թիվ 656 որոշման 9-րդ կետով և հիմք ընդունելով Թումանյան համայնքի հողերի փոփոխությունների վերաբերյալ հողաշինարարի կողմից տրված տեղեկանքը՝
Թումանյան համայքի ավագանին որոշում է.

Թումանյան համայնքի հողային հաշվեկշիռը 2019 թ. հուլիսի 1-ի դրությամբ կազմում է՝ 29909,31հա, համաձայն տեղեկանքի:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԳԱԼՍՏՅԱՆ ԳՈՌ

ԽԵՉՈՅԱՆ ՄԵՐՈՒԺԱՆ

ՄԽԻԹԱՐՅԱՆ ՏԻԳՐԱՆ

ՇԱՀՎԵՐԴՅԱՆ ՍԵՅՐԱՆ

ՍԱՐԳՍՅԱՆ ՀՐԱՆՏ

ՎԻՐԱԲՅԱՆ ԳԱՅԱՆԵ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ... ՋԱՎԱՐՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

---

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Թումանյան, (098)048046, tumanyan.lori@mta.gov.am

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

11 ՀՈՒՆԻՍԻ 2019թվականի N 28-Ա

ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով<<Տեղական ինքնակառավարման մասին>>ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով,հիմք ընդունելով Թումանյան համայնքի ավագանու 2018թ. դեկտեմբերի 21-ի <<Թումանյան համայնքի 2019թ. բյուջեն հաստատելու մասին>> թիվ 62 -Ն որոշումը, Թումանյան համայնքի զոհված զինծառայողների, զինծառայողների ընտանիքների սոցիալական պաշտպանվածության բարելավման, պատերազմի վետերանների սոցիալական խնդիրների լուծման, հաշմանդամների, կերակրողին կորցրած ընտանիքների,սոցիալապես անապահով այլ խավերի սոցիալական պայմանների բարելավման վերաբերյալ դիմումները քննարկող հանձնաժողովի եզրակացությունը ,Թումանյան համայնքի ղեկավարի առաջարկությունը և հաշվի առնելով Թումանյան համայնքի բնակիչների դիմումները՝ Թումանյան համայնքի ավագանին որոշում է.

1.Թումանյանի համայնքապետարանի սոցիալական օգնություն խմբի այլ նպաստներ բյուջեից /հոդված 4729 / Թումանյան համայնքի սոցիալապես անապահով քաղաքացիներին տրամադրել դրամական օգնություն՝ համաձայն հավելվածի:
2.Թումանյանի համայնքապետարանի գանձապահին լիազորել Արդշինինվեստ բանկ Ալավերդու մասնաճյուղից ստանալու հատկացված դրամական օգնությունը:

Կողմ -5　　　　Դեմ -1　　　　Ձեռնպահ -0

ԳԱԼՍՏՅԱՆ ԳՈՌ　　　　ԽԵՉՈՅԱՆ ՄԵՐՈՒԺԱՆ

ՄԽԻԹԱՐՅԱՆ ՏԻԳՐԱՆ

ՇԱՀՎԵՐԴՅԱՆ ՍԵՅՐԱՆ

ՍԱՐԳՍՅԱՆ ՀՐԱՆՏ

ՎԻՐԱԲՅԱՆ ԳԱՅԱՆԵ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԵՅՐԱՆ ՔԱՔԱՐՅԱՆ

Հավելված
Թումանյան համայնքի ավագանու
2019թ. հունիսի 11-ի թիվ 28-Ա որոշման

## ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

1.Ըստ ստացված դիմումների Թումանյան համայնքի հիշյալ սոցիալապես անապահով բնակիչներին հատկացնել դրամական օգնություն.

1. Ղամբարյան Սոֆյա Սարգսի -ք. Թումանյան -- 50000 դրամ,
2. Արշակյան Լուսյա Վոլոդյայի -ք. Թումանյան -- 10000 դրամ,
3. Մովսիսյան Սուսաննա Սուրենի -ք. Թումանյան - 10000 դրամ,
4. Ամիրխանյան Վերիչկա Հմայակի - գ. Քարինջ 10000 դրամ,
5. Գևորգյան Հռիփսիմե Մամիկոնի -գ. Մարց 100000 դրամ,
6. Դավթյան Համլետ Վաղինակի –գ.Ահնիձոր 10000 դրամ,
7. Սարգսյան Աշոտ.Ջանիբեկի –գ.Ահնիձոր 10000 դրամ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԼԵՎՈՆ ԶԱՎԱՐՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Թումանյան, (098)048046, tumanyan.lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

11 ՀՈՒՆԻՍԻ 2019թվականի N 29-Ա

## ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԱՂԱԺԱՄԿԵՏ ԴԱԴԱՐԵՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով և հիմք ընդունելով Թումանյան համայնքի ավագանու անդամ Տիգրան Սամվելի Մխիթարյանի դիմումը՝ Թումանյան համայնքի ավագանին որոշում է.

Հրաժարական տալու պատճառով վաղաժամկետ դադարեցնել Թումանյան համայնքի ավագանու անդամ Տիգրան Սամվելի Մխիթարյանի լիազորությունները:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԳԱԼՍՏՅԱՆ ԳՈՌ

ԽԵՉՈՅԱՆ ՄԵՐՈՒԺԱՆ

ՇԱՀՎԵՐԴՅԱՆ ՍԵՅՐԱՆ

ՍԱՐԳՍՅԱՆ ՀՐԱՆՏ

ՎԻՐԱԲՅԱՆ ԳԱՅԱՆԵ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԼԵՎՈՆ ՉԱՎԱՐՅԱՆ